ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 ապրիլի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

40
(3249)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՆՎԵՐՆԵՐ Է ՍՏԱՑԵԼ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած պաշտոնյայի նվերների հաշվառման ձեւաթղթերը եւ պարզել, թե ինչ հուշանվերներ է ստացել ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը 2026 թվականին:

ԿԿՀ ներկայացրած պաշտոնյայի նվերների հաշվառման ձեւաթղթից պարզեցինք, որ Սիմոնյանը մի շարք նվերներ է ստացել 2026 թվականի փետրվարի 4-7-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած պաշտոնական այցի շրջանակում:

Մասնավորապես, ըստ նույն աղբյուրի՝ Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն նրան նվիրել է ժամացույց՝ Դաշնության խորհրդի տարբերանշանով եւ պահոցով, որի արժեքը գնահատվել է 149 հազար 658 դրամ: Նվերը հանձնվել է փետրվարի 5-ին Մոսկվայում:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ նաեւ, որ Մատվիենկոն Սիմոնյանին նվիրել է եւս մեկ հուշանվեր՝ «Զմեռային անտառ» նկար, որի արժեքը կազմել է 249 հազար 430 դրամ: Այն նույնպես ստացվել է նույն օրը՝ պաշտոնական այցի շրջանակում:

ԿԿՀ ներկայացրած ձեւաթղթից պարզեցինք նաեւ, որ «Ռոսատոմ» կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչովը Սիմոնյանին նվիրել է հուշանվեր՝ մատրյոշկա եւ ռեակտորի արձանիկ: Նվերի արժեքը գնահատվել է 159 հազար 635 դրամ, եւ այն հանձնվել է փետրվարի 6-ին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Երեկ հայտնի դարձավ, որ Վազգեն Սահակյանը դատավոր չի նշանակվի: ՍԴ-ն բավարարել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի դիմումը՝ Բարձրագույն դատական խորհրդի՝2026 թվականի մարտի 12-ի թիվ ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը ճանաչելով Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին հակասող: Հիշեցնենք, որ Վազգեն Սահակյանին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր նշանակելու առաջարկ ԲԴԽ-ն ՀՀ նախագահին ներկայացրել է մարտի 12-ին: ՀՀ նախագահը, սակայն, չի ստորագրել նշանակման հրամանագիրը եւ դիմել է ՍԴ՝ վիճարկելով սահմանադրականության հարցը: Մենք հայտնել էինք, որ թեկնածուի բարեվարքությունը այնքան էլ լավ չի գնահատվել, սակայն ԲԴԽ-ն ներկայացրել էր նրա թեկնածությունը՝ առանց լուրջ հիմնավորումների: Հիշեցնենք, որ մերժված դատավորի հայրը վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Տիգրան Սահակյանն է, որը 2008 թվականից մինչեւ 2016 թվականը զբաղեցրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի պաշտոնը, սակայն աղմկալի պատմության արդյունքում նրա հետ գործարքի գնացին ու հանեցին նախագահի պաշտոնից:

⇨ ***էջ 4***

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝աշխատանքից ազատել են բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Իսրայել Հակոբկոխյանի քննիչ որդուն եւ նրա պետին: Վերջիններս քննում էին Փաշինյանի հետ 18-ամյա Դավիթի միջադեպի գործը: Կիրակի օրը եկեղեցու տարածքում Նիկոլ Փաշինյանի հետ տեղի ունեցած միջադեպից հետո իրավապահ մարմինները ձերբակալել էին երկու երիտասարդ եղբայրների եւ ազատամարտիկի: Քննիչները այցելել էին երիտասարդների բնակարան՝ իրականացնելու քննչական գործողություններ եւ խուզարկություն: Իհարկե, նրանց տնից որեւէ արգելված կամ գործի համար նշանակալի առարկա չէր հայտնաբերվել: Սակայն ուշագրավ է, թե ով էր քննչական գործողություններ իրականացրած քննիչը: ArmLur.am-ի՝ իրավապահ համակարգին մոտ կանգնած աղբյուրների փոխանցմամբ, նա բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Իսրայել Հակոբկոխյանի որդին է: Դիմեցինք Քննչական կոմիտե, սակայն մեկնաբանություն չտվեցին:

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը նախորդ օրը՝ ուշ երեկոյան, հեռախոսազրույց էին ունեցել՝ քննարկելով Իրանի շուրջ սրվող իրավիճակը եւ դրա ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության վրա: Զրույցի ընթացքում Փեզեշքիանը ներկայացրել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող հարվածների վերջին զարգացումները՝նշելով, որ թիրախավորվել են նաեւ քաղաքացիական օբյեկտներ, այդ թվում՝դպրոցներ, հիվանդանոցներ եւ կարեւոր ենթակառուցվածքներ: Նրա խոսքով՝լարվածության աճը տեղի է ունեցել այն պայմաններում, երբ Թեհրանը բանակցություններ էր վարում Վաշինգտոնի հետ: Իրանի նախագահին ընդգծել է, որ երկիրը վճռական է պաշտպանել իրեն բոլոր հնարավոր միջոցներով:

⇨ ***էջ 3***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԸՆՏՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ»

Armlur.am-ը զրուցել է «Դեմ եմ բոլորին» քաղաքական շարժման անդամ Հայկ Մանասյանի հետ:

- Պարոն Մանասյան, Նիկոլ Փաշինյանը մեկնել է Մոսկվա, եւ նախատեսվում է հանդիպում Վլադիմիր Պուտինի հետ: Ի՞նչ ակնկալիքներ ունեք այդ հանդիպումից՝ հաշվի առնելով նաեւ առաջիկա համապետական ընտրությունները:

- Կարծում եմ՝ քննարկումների առանցքում լինելու են ինչպես արտաքին, այնպես էլ ներքաղաքական հարցեր: Մասնավորապես, խոսքը կարող է գնալ հաղորդակցությունների, երկաթուղու եւ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» շուրջ ռուսական շահերի մասին: Չնայած իշխանությունները փորձում են այլ անվանումներ կիրառել, հարցի էությունը դրանից չի փոխվում: Եթե Ադրբեջանը ստանա անխոչընդոտ անցման իրավունքներ, որոնք Հայաստանը չի կարող սահմանափակել, ապա դա լուրջ խնդիր է:

Բացի դրանից, չեմ բացառում նաեւ ներքաղաքական պայմանավորվածությունների տարբերակը: Իմ կարծիքով՝ հնարավոր է քննարկվում լինի իշխանության փոխանցման սցենար, այդ թվում՝ Սամվել Կարապետյանին կամ նրան հարող ուժերին: Այս համատեքստում նկատելի է, որ գործող իշխանությունը, հակաքարոզչություն իրականացնելով, փաստացի նաեւ գովազդում է որոշ քաղաքական դերակատարների:

- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է իշխանությունը շահագրգռված նման քայլերում:

- Այստեղ երկու հիմնական շահ եմ տեսնում: Նախ՝ քաղաքական պայքարը տեղափոխել այնպիսի դաշտ, որտեղ հնարավոր կլինի օգտագործել արդեն ծանոթ մեղադրանքները՝ «նախկիններ», «թալան», եւ այլն: Երկրորդ՝ ընտրողին պահել հին հակադրությունների շրջանակում: Օրինակ՝ կրկին ակտիվացվում է նախկին իշխանությունների թեման՝ 2021 թվականի տեխնոլոգիան կրկնելու ակնկալիքով:

- «Բոլորին դեմ» շարժման հիմնական գաղափարն ի՞նչն է:

- Մեր նպատակը քաղաքական դաշտում ներկայացնել այն հանրային տրամադրությունը, որն այսօր շատերի մոտ կա՝ դժգոհություն բոլոր գործող ուժերից: Մենք ուզում ենք, որ այդ դիրքորոշումը լեգիտիմ ձեւ ստանա եւ վերածվի իրական քվեի: Շատ մարդիկ չեն մասնակցում ընտրություններին, եւ արդյունքում նրանց ձայները փաստացի աշխատում են առաջատար ուժերի օգտին: Մենք ասում ենք՝ մի մնացեք տանը, եկեք եւ արտահայտեք ձեր «բոլորին դեմ» դիրքորոշումը:

- Մտավախություն չե՞ք ունենում, որ ձեր օգտին տրված ձայները կարող են «փոշիանալ»:

- Այսօր արդեն հարյուր հազարավոր ձայներ «փոշիանում» են հենց չմասնակցելու պատճառով: Եթե մենք կարողանանք թեկուզ այդ ձայների մի մասը բերել ընտրատեղամաս, արդեն մեծ խնդիր ենք լուծում: Վատագույն դեպքում նույնիսկ 40-50 հազար ձայնի փոշիացումը կանխելը կարեւոր արդյունք է, իսկ իրատեսական սցենարով մենք կարող ենք անցնել խորհրդարան եւ ներկայացնել այդ հանրային պահանջը:

- Որո՞նք են ձեր առաջնային ծրագրային դրույթները:

- Կարճաժամկետ՝ 100-օրյա ծրագրում երեք հիմնական ուղղություն կա: Առաջինը՝ «բոլորին դեմ» քվեաթերթիկի ներդրումն է: Մենք ուզում ենք, որ քաղաքացիները հնարավորություն ունենան ոչ միայն ընտրել որեւէ ուժ, այլեւ օրինական ձեւով մերժել բոլորին: Բացի այդ, կարեւորում ենք ընտրական մշակույթի ձեւավորումը. ընտրությունները պետք է լինեն ավելի հաճախակի եւ մասնակցային, որպեսզի հասարակությունը վարժվի ժողովրդավարական գործընթացներին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԺԱՄԱՆԱԿԸ ՎՃՌՈՐՈՇ Է

Ադրբեջանում ապօրինի պահվող հայ գերիների հարազատներն ու ներկայացուցիչները նամակով դիմել են ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին, Շվեյցարիայի Համադաշնության արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի ղեկավար Իգնացիո Կասիսին, ինչպես նաեւ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի նախագահ Միրյանա Սպոլյարիչ Էգերին՝ Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում «Հովանավոր տերության» մեխանիզմի գործարկման խնդրանքով: Այս մասին տեղեկացնում է «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնը», որի ղեկավարը ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ Միրանուշ Սահակյանն է:

«Մենք՝ Ադրբեջանում ապօրինի պահվող հայ գերիների հարազատներ ու ներկայացուցիչներ հանդիսացողներս, հայտնում ենք մեր խորին մտահոգությունը Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակի ամբողջական փակման կապակցությամբ: Սա զգալի չափով վատթարացրել է մեր հարազատների արդեն իսկ ծանր վիճակը՝ մեզ թողնելով նրանց ճակատագրի եւ կացության վերաբերյալ խորը անորոշության մեջ: Հաշվի առնելով վերոգրյալը եւ հիշեցնելով միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում սահմանված պարտավորությունները՝ մենք, ամենայն հարգանքով, բայց նաեւ հաստատակամորեն կոչ ենք անում Հայաստանին պաշտոնապես դիմել Շվեյցարիայի Համադաշնության կառավարությանը, որպեսզի շվեյցարական կողմը ստանձնի «Հովանավոր տերության» դերը: Սա անհրաժեշտ եւ հրատապ քայլ է մեր հարազատների իրավունքների, անվտանգության եւ արժանապատվության պաշտպանությունը միջազգայնորեն ճանաչված մեխանիզմներով ապահովելու համար: Մենք գիտակցում ենք, որ «Հովանավոր տերության» ինստիտուտը վերջին տասնամյակների ընթացքում չի կիրառվել ու կարող է անսովոր թվալ այսօրվա համատեքստում, սակայն բացառիկ եւ ապօրինի հանգամանքները, որի հետ առնչվում ենք, պահանջում են հենց այսպիսի բացառիկ միջոցներ: Ադրբեջանը շարունակում է մեկուսացված պահել հայ գերիներին իրենց ընտանիքներից, անկախ փաստաբաններից եւ մարդասիրական գործունեություն իրականացնող անկողմնակալ կառույցներից, ինչը միջազգային մարդասիրական իրավունքի, այդ թվում՝ 1949 թվականի Ժնեւի կոնվենցիաների կոպիտ խախտում է»,- մասնավորապես ասվում է նամակում:

Նշելով, որ առնվազն 19 անձ այս պահին պահվում է Բաքվում, նրանց հարազատներն արձանագրում են, որ այս իրավիճակը հանգեցրել է իրավունքի պաշտպանության լուրջ վակուումի՝ ստեղծելով բռնության ենթարկվելու, վատ վերաբերմունքի արժանանալու եւ նույնիսկ բռնի անհետացման բարձր ռիսկեր: «Հաշվի առնելով այս հրատապ եւ արտակարգ հանգամանքները, ինչպես նաեւ Շվեյցարիայի՝ որպես ԿԽՄԿ-ն հյուրընկալող եւ միջազգային մարդասիրական իրավունքի գլխավոր աջակից պետության կարգավիճակը, ամենայն հարգանքով խնդրում ենք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ պաշտոնապես դիմել Շվեյցարիայի Համադաշնության կառավարությանը, որպեսզի այն ստանձնի «Հովանավոր տերության» դերակատարությունն Ադրբեջանի կողմից պահվող բոլոր հայ գերիների նկատմամբ, Շվեյցարիայի Համադաշնության կառավարությանը՝ բավարարել Հայաստանի դիմումը եւ գործել որպես «Հովանավոր տերություն»՝ հնարավորին չափ պաշտպանելով գերիների իրավունքներն ու արժանապատվությունը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեին՝ որպես «Հովանավոր տերության» փոխարինող, աջակցել այս նշանակմանը եւ օգնել Շվեյցարիային իր գործառույթների իրականացման գործում: Ժամանակն ունի վճռորոշ նշանակություն: Շարունակվող հապաղումը կարող է ավելի խորացնել ապօրինի պահվող անձանց տառապանքները եւ մեծացնել նրանց կյանքի ու ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ սպառնալիքները: Ուստի կոչ ենք անում Հայաստանի Հանրապետության եւ Շվեյցարիայի կառավարություններին ձեռնարկել համապատասխան քայլեր իրենց մանդատի շրջանակում, եւ դա անել ճիշտ ժամանակին: Բացի այդ, Կարմիր խաչի միջազգային կոմիտեին խնդրում ենք աջակցել, որպեսզի ապահովվի միջազգային իրավունքի արդյունավետ կիրառումը եւ էթնիկ հայերի իրավունքների պատշաճ պաշտպանությունը՝ շարունակվող խախտումների պայմաններում»,-նշվում է նամակում:

ՀԾԿՀ-ՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է

Սույն թվականի ապրիլի 3-ին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանի գլխավորությամբ եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ժամանակավոր կառավարիչ Ռ. Պետրոսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային քննարկում նոր սպառման համակարգերի՝ բաշխման ցանցին միացման վճարների վերանայման վերաբերյալ:

Քննարկումը միտված էր բաշխման ցանցին միացման համար Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 523Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններով սահմանված՝ 0,22կՎ եւ 0,4կՎ լարմամբ առանձնատների եւ առանձին շինություններում գտնվող դիմող անձանց, ինչպես նաեւ բազմաբնակարան շենքերի բնակիչների կողմից վճարվող համապատասխան միացման վճարների նվազեցմանը:

Քննարկվել է նաեւ բաշխման ցանցին 6(10)կՎ լարմամբ միացման գործընթացը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տեխնիկական պայմանների տրամադրման միջոցով իրականացնելու հնարավորությունը:

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված հիմնավորումները՝ առաջիկայում կդիտարկի վերոնշյալ միացման վճարների նվազեցման եւ 6(10)կՎ լարմամբ միացման դեպքում տեխնիկական պայմանների տրամադրմամբ բաշխման ցանցին միացման հնարավորությունը:

ՎԻՐԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԹՐԱՄՓԻ ԾԱՂՐԱՆՔՆԵՐԻՑ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հեգնական եւ երբեմն նվաստացնող հայտարարությունները լուրջ անհանգստություն են առաջացնում Եվրոպայում: Այս մասին գրում է Euraձtiv-ը՝ հղում անելով բարձր մակարդակի աղբյուրներին:

Ըստ հրապարակման՝ Թրամփի հաճախ փոփոխվող եւ կտրուկ արտահայտությունները ստիպում են եվրոպացի դաշնակիցներին կասկածի տակ դնել ՆԱՏՕ-ի կայունությունը: Նշվում է, որ դաշինքը հերթական անգամ փորձում է հաղթահարել քաղաքական լարվածությունը, որը կապված է ԱՄՆ նախագահի հայտարարությունների հետ:

Ավելի վաղ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը կոչ էր արել Թրամփին ավելի քիչ խոսել եւ ավելի շատ գործել՝ ընդգծելով, որ խոսքն ու գործողությունները պետք է համընկնեն:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՓԵԶԵՇՔԻԱՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը երեկ ուշ երեկոյան հեռախոսազրույց էին ունեցել՝ քննարկելով Իրանի շուրջ սրվող իրավիճակը եւ դրա ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության վրա: Զրույցի ընթացքում Փեզեշքիանը ներկայացրել է ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացվող հարվածների վերջին զարգացումները՝ նշելով, որ թիրախավորվել են նաեւ քաղաքացիական օբյեկտներ, այդ թվում՝ դպրոցներ, հիվանդանոցներ եւ կարեւոր ենթակառուցվածքներ: Նրա խոսքով՝ լարվածության աճը տեղի է ունեցել այն պայմաններում, երբ Թեհրանը բանակցություններ էր վարում Վաշինգտոնի հետ: Իրանի նախագահը ընդգծել է, որ երկիրը վճռական է պաշտպանել իրեն բոլոր հնարավոր միջոցներով: Փեզեշքիանը նաեւ շնորհակալություն է հայտնել ադրբեջանական կողմին՝ աջակցության եւ համերաշխության խոսքերի համար:

Իր հերթին, Ալիեւը նշել է, որ շարունակվող հակամարտությունները բացասաբար են անդրադառնում տարածաշրջանային խաղաղության եւ կայունության վրա՝ հույս հայտնելով, որ իրավիճակը շուտով կկարգավորվի:

Կողմերը քննարկել են նաեւ երկկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները եւ ընդգծել տարբեր ոլորտներում համագործակցության շարունակման կարեւորությունը:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ են սկսել Իրանի դեմ՝ փետրվարի 28-ին Իրանի հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի սպանությունից հետո: Հարվածները հասցվել են ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական օբյեկտների վրա՝ առաջացնելով զգալի մարդկային կորուստներ եւ ենթակառուցվածքների վնասներ:

Ի պատասխան՝ Իրանի զինված ուժերը հարվածներ են հասցրել ամերիկյան եւ իսրայելական դիրքերին՝ կիրառելով հրթիռներ եւ անօդաչու թռչող սարքեր:

Ա. Վ.

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ

18-ամյա Դավիթ Մինասյանին Արմավիրի բանտից տեղափոխել են Աբովյան ՔԿՀ. «Հիմա էլ հիվանդանոցի փոխարեն Դավիթին տեղափոխում են Աբովյան ՔԿՀ. էրեխուն քարկտիկ են սարքել»: Այս մասին գրել է փաստաբան Լուսինե Մարտիրոսյանը:

Հիշեցնենք, որ Սուրբ Աննա եկեղեցում Ծաղկազարդի պատարագի ընթացքում վարչապետը շքախմբով մտել է եկեղեցի, գրավել ներկաների ուշադրությունը, ինչից դժգոհել են ներկաները: Դավիթ եւ Միքայել Մինասյան եղբայրներից մեկն ասել է. «Տենց չնայես»: Մոտ մեկ ժամ անց եկեղեցու բակից ոստիկանները բիրտ ուժով բերման ենթարկեցին Դավիթ եւ Միքայել Մինասյան եղբայրներին, ինչպես նաեւ Հայ ազգային ճակատի հիմնադիր, քաղաքական գործիչ Գեւորգ Գեւորգյանին: Սուրբ Աննա եկեղեցում Նիկոլ Փաշինյանի հետ միջադեպի մասնակից դպրոցական 18-ամյա Դավիթ Մինասյանը դատավոր Մնացական Մարտիրոսյանի որոշմամբ 2 ամսով կալանավորվեց: Մյուս եղբայրը՝ Միքայելը, ազատ էր արձակվել:

ՆՎԵՐՆԵՐ

Ի՞ՆՉ ՆՎԵՐՆԵՐ Է ՍՏԱՑԵԼ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական էջի «Նվերներ» բաժինը եւ պարզել, թե ինչ նվերներ է ստացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ԿԿՀ էջի տվյալների ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ ամենախոշոր նվերը վարչապետը ստացել է 2026 թվականի փետրվարի 4-ին՝ Արաբական Միացյալ Էմիրություններում կայացած «Զայեդ» մարդկային եղբայրության մրցանակաբաշխության շրջանակում:

Ըստ հայտարարագրի՝ մրցանակը շնորհվում է այն անհատներին եւ կազմակերպություններին, որոնք նպաստում են խաղաղ համակեցությանը եւ մարդկային եղբայրության գաղափարի տարածմանը: Որպես 2026 թվականի մրցանակակիր՝ Փաշինյանը ստացել է 500 հազար ԱՄՆ դոլար դրամական մրցանակ, որը հայտարարագրում գնահատվել է 188 մլն 750 հազար դրամ:

ԿԿՀ կայքի տվյալների համաձայն՝ վարչապետը եւս մեկ նվեր ստացել է ռուսաստանցի գործարար Վլադիմիր Եվտուշենկովից: Վերջինս հանդիսանում է «Սիստեմա» բաժնետիրական ֆինանսական կորպորացիայի ներկայացուցիչ:

Ուսումնասիրելով տվյալները՝ պարզեցինք, որ Եվտուշենկովը Փաշինյանին նվիրել է «Երկնագույն պսակ» անվանումով թեյի սպասքի հավաքածու, որը պատրաստված է «Գժել» ասոցիացիայի կողմից՝ բարձրակարգ ճենապակուց եւ ոսկեզօծմամբ: Նվերի արժեքը գնահատվել է 400 հազար դրամ: Այն հանձնվել է հունվարի 20-ին՝ գործարարի հետ հանդիպման ընթացքում:

ԿԿՀ էջի ուսումնասիրությունից պարզ դարձավ նաեւ, որ վարչապետը նվեր է ստացել նաեւ հայկական ընկերությունից: Մասնավորապես, «Armenian Helicopters» ՍՊԸ-ն Փաշինյանին նվիրել է ձեռքի ժամացույց՝ ընկերության տարբերանշանով:

Այս նվերի արժեքը գնահատվել է 90 հազար դրամ: Այն ստացվել է փետրվարի 7-ին, երբ վարչապետը այցելել էր ընկերություն՝ ծանոթանալու դրա գործունեությանը եւ զարգացման ծրագրերին:

Այսպիսով, ԿԿՀ պաշտոնական տվյալների համաձայն՝ 2026 թվականին ՀՀ վարչապետի ստացած նվերների թվում առավել աչքի ընկնողը 500 հազար դոլար արժողությամբ միջազգային մրցանակն է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՈՉՆՉԱՑՎԵԼ ԵՆ

Իրանի հարավային Բուշեր նահանգում Իրանի Կարմիր մահիկի ընկերության գրասենյակին հասցված ավիահարվածի հետեւանքով ոչնչացվել է մարդասիրական օգնություն պարունակող երկու կոնտեյներ: Այս մասին նշվել է ընկերության թելեգրամ-ալիքում տեղադրված հայտարարության մեջ:

«Գրոհը տեղի է ունեցել ապրիլի 3-ին, տեղի ժամանակով մոտ ժամը 5:00-ին, Բուշեր նահանգի Չողադաք շրջանում: Ոչնչացվել են մարդասիրական օգնություն տեղափոխելու համար օգտագործվող երկու անվավոր կոնտեյներներ, ինչպես նաեւ մեկ ավտոբուս եւ փրկարարական մեքենա»,- նշվել է հայտարարության մեջ:

ՄԱԿ-Ը ՀԱՅՏՆԵԼ Է

Իրանի դեմ պատերազմի սկսվելուց ի վեր Պարսից ծոցում գրանցվել է առեւտրային նավերի վրա ավելի քան 20 հարձակում:

ՄԱԿ-ի Միջազգային ծովային կազմակերպությունը (IMO) հայտնել է, որ հարվածների հետեւանքով զոհվել է 10 մարդ, կան վիրավորներ: «2026 թվականի փետրվարի 28-ին հակամարտության սկսվելուց ի վեր, IMO-ն հաստատել է առեւտրային նավերի վրա 21 հարձակում, որոնց արդյունքում զոհվել է 10 ծովային, իսկ մի քանիսը ծանր վիրավորվել են:

Պարսից ծոցում գտնվող նավերի վրա մնում է մոտ 20,000 քաղաքացիական ծովային՝ բախվելով սպառված պաշարների, հոգնածության եւ ծանր հոգեբանական սթրեսի», - ասվում է հայտարարության մեջ:

Փետրվարի 28-ին Միացյալ Նահանգները եւ Իսրայելը պատերազմ սկսեցին Իրանի դեմ: Հարվածները հասան Իրանի խոշոր քաղաքներին, այդ թվում՝ Թեհրանին:

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարեց Իսրայելի վրա հարձակվելու լայնածավալ պատասխան գործողության մասին:

Հարվածներ հասան նաեւ Բահրեյնում, Հորդանանում, Իրաքում, Կատարում, Քուվեյթում, ԱՄԷ-ում եւ Սաուդյան Արաբիայում գտնվող ԱՄՆ ռազմական օբյեկտներին:

ԻՐԱՆԸ ՉԻ ՀԱՆՁՆՎԻ

Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին հայտարարել է, որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից քաղաքացիական ենթակառուցվածքների՝ այդ թվում կամուրջների վրա իրականացվող հարվածները չեն ստիպի իրանցիներին հանձնվել:

Նրա խոսքով՝ նման գործողությունները միայն ցույց են տալիս հակառակորդի «պարտությունը եւ բարոյական անկումը», սակայն չեն կոտրի Իրանի դիմադրությունը:

«Յուրաքանչյուր կամուրջ եւ շենք կվերակառուցվի ավելի ամուր»,-գրել է նա սոցիալական ցանցում՝ ընդգծելով, որ ավելի դժվար վերականգնելի կլինի ԱՄՆ-ի հեղինակությանը հասցված վնասը:

Իրանական կողմի տվյալներով՝ ավելի վաղ Քարաջ քաղաքում, Թեհրանի արեւմուտքում, իրականացվել են հարվածներ դեռ կառուցվող կամրջի վրա, որոնց հետեւանքով զոհվել է առնվազն երկու քաղաքացի:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԸ

Իրանի կողմից ամերիկյան ռազմածովային ուժերի «Աբրահամ Լինքոլն» ավիակրին հարվածներ հասցնելու մասին հաղորդագրությունների ֆոնին ԱՄՆ զինված ուժերից հայտնել են, որ ավիակիրն առաջվա պես շարունակում է գործողություններ կատարել, իրականացնում է տախտակամածային ավիացիայի թռիչքներ:

Armenpress-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդել է Մերձավոր Արեւելքում ԱՄՆ զինված ուժերի Կենտրոնական հրամանատարությունը (CENTCOM):

Ավելի վաղ հրամանատարությունը հայտնել էր, որ ավիակիրը ներկայում մարտական առաջադրանքներ է իրականացնում Արաբական ծովի շրջանում:

CENTCOM-ի հաղորդագրությունը հրապարակվել է այն բանից հետո, երբ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել էր, որ հարվածներ է հասցրել «Աբրահամ Լինքոլն» ավիակրին: Ըստ իրանական Press TV հեռուստաալիքի՝ ԻՀՊԿ-ն հայտարարել էր, որ ավիակրի ուղղությամբ արձակվել է չորս «Քադր» բալիստիկ հրթիռ, որոնք ունեն գործողության մինչեւ 2000 կմ հեռահարություն:

ՍԴ-Ի «ԱՊՏԱԿԸ»

«ՊՐՈՄԽ» ՏՎԱԾ ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՈՐԴՈՒՆ ՄԵՐԺԵՑԻՆ

Երեկ հայտնի դարձավ, որ Վազգեն Սահակյանը դատավոր չի նշանակվի: ՍԴ-ն բավարարել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի դիմումը՝ Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի թիվ ԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկությունը ճանաչելով Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին հակասող: Որոշումը հրապարակվել է ֆիչ առաջ:

Հիշեցնենք, որ Վազգեն Սահակյանին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր նշանակելու առաջարկը ԲԴԽ-ն ՀՀ նախագահին ներկայացրել է մարտի 12-ին: Սակայն ՀՀ նախագահը չի ստորագրել նշանակման հրամանագիրը եւ դիմել է ՍԴ՝վիճարկելով դրա սահմանադրականությունը:

Մենք հայտնել էինք, որ թեկնածուի բարեվարքությունը այնքան էլ բարձր չի գնահատվել, սակայն ԲԴԽ-ն ներկայացրել էր նրա թեկնածությունը՝առանց լուրջ հիմնավորումների:

Հիշեցնենք նաեւ, որ մերժված թեկնածուի հայրը՝ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Տիգրան Սահակյանը, 2008 թվականից մինչեւ 2016 թվականը զբաղեցրել է այդ պաշտոնը: Սակայն աղմկալի պատմության արդյունքում նրա հետ գործարքի են գնացել եւ նրան հեռացրել նախագահի պաշտոնից:

Մամուլը գրել էր, որ 2016 թվականին դատական համակարգում սկանդալային պատմություն տեղի ունեցավ: Մասնավորապես, վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Տիգրան Սահակյանի պաշտոնը իջեցվել էր՝ նրան տալով սովորական դատավորի կարգավիճակ, քանի որ նա եւ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատարանի նախագահ, Հոկտեմբերի 27-ի ոճրագործության գործով դատավոր Սամվել Ուզունյանը «պրոմխ» էին տվել: Ըստ տեղեկությունների՝ նշվում է, որ ինչ-որ գործով Ս. Ուզունյանն ու Տ. Սահակյանը սխալ են գործել, եւ հենց դա էլ դարձել է ճակատագրական:

Ասվում է, որ Ուզունյանին կանչել եւ ասել են՝ «դիմումդ գրի, գնա», իսկ վերջինս ընդամենը արձակուրդ գնալու դիմում էր գրել ու անհետացել: Տիգրան Սահակյանին էլ համաձայնել են պահել նույն դատարանում՝ արդեն դատավորի կարգավիճակով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված լայնածավալ միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել առ այն, որ մի խումբ անձինք նպատակադրվել են ընտրակաշառք բաժանել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում տեղի ունեցած ավագանու ընտրություններին իրենց օգտին քվեարկելու համար:

Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով խմբի անդամները հավաքագրել են հիմնականում Հայաստանի հանրապետական կուսակցության անդամների, ովքեր հանրության շրջանում ունեցել են լայն կապեր եւ բազմաթիվ ծանոթներ: Արդյունքում՝ հինգ տասնյակից ավել անձանց խոստացել են 50.000-ական դրամի չափով ընտրակաշառք՝ պայմանով, որ ընտրություններին քվեարկեն «Հայրենիք» կուսակցության թեկնածուի օգտին:

Հանցանքն ավարտին հասցնելու եւ այդ նպատակով գործընթացն ամբողջապես վերահսկելու համար խմբի անդամները կատարել են դերերի հստակ բաշխում, կազմել են հավաքագրված ընտրողների ցուցակներ, իսկ ընտրության օրը հեռախոսակապի մեջ են գտնվել հավաքագրված քաղաքացիների հետ:

Կատարված խուզարկության արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են ընտրակաշառք ստանալու առաջարկն ընդունած եւ ընտրակաշառք տալուն օժանդակած անձանց վերաբերյալ ձեռագիր գրառումներ պարունակող փաստաթղթեր, ընտրողների եւ ընտրատեղամասերի վերաբերյալ ցուցակներ:

Քրեական վարույթով ձերբակալվել եւ հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել 62 անձանց նկատմամբ, որոնց մի մասն իրենց մեղավոր են ճանաչել ներկայացված մեղադրանքում եւ տվել խոստովանական ցուցմունքներ:Մեղադրյալներից մի մասի նկատմամբ վարույթն անջատվել եւ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ ՊԱՀՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հարազատները շարունակում են ձերբակալված մնալ: Հայտնել էինք, որ Չարենցավանի դատարանում խառնաշփոթ իրավիճակ էր ստեղծվել:

ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հորեղբոր թոռան՝Սարգիս Ջեյնալյանի սպանության գործով դատական նիստի ընթացքում տուժողների հարազատների եւ մեղադրյալների միջեւ վիճաբանություն էր սկսվել, որը վերածվել էր ծեծկռտուքի: Դրա հետեւանքով վիրավորվել էին նաեւ դատական կարգադրիչները:Կարգադրիչներից մեկը գլխի հատվածում վնասվածք էր ստացել:

ՀՀ քննչական կոմիտեից հայտնել էին, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն) եւ 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (մի խումբ անձանց կողմից առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը):28 անձ ձերբակալվել է: Նախաքննությունը շարունակվում է:

Արդյունքում ձերբակալվածների թվում են եղել նաեւ ՍԴ դատավոր Արտակ Ջեյնալյանի հորեղբոր տղաները եւ այլ հարազատներ, որոնք շարունակում են մնալ ոստիկանությունում:

Ք. Մ.

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԷՐ

2026 թվականի ապրիլի 2-ին ՊՆ զորավարժադաշտում տեղի ունեցած դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասի (զինվորական պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) եւ 532-րդ հոդվածի 3-րդ մասի (զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) հատկանիշներով:

Պայմանագրային զինծառայողը մահացել է:

Քննչական կոմիտեից հայտնում են, որ նախաքննության ընթացքում կատարվել են մի շարք անհետաձգելի քննչական եւ վարութային այլ գործողություններ:

ՉԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Կասկածելի վարքագիծ, փախուստի փորձ եւ փրկված կյանք. Ոստիկանության գվարդիայի ծառայողները ապրիլի 1-ին Հրազդանի կիրճում շրջիկ ծառայություն իրականացնելիս բացահայտեցին ապօրինի թմրաշրջանառության հերթական դեպքը:

«Ոստիկանության գվարդիայի ծառայողները Հրազդանի կիրճի տարածքում նկատել էին մի քաղաքացու, որը ոստիկաններին տեսնելիս դրսեւորել էր տարօրինակ վարքագիծ: Ոստիկանները փորձել են հետապնդել, ինչի արդյունքում քաղաքացին դիմել է փախուստի»,- նշել է Ոստիկանության գվարդիայի հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման վարչության ծառայության կազմակերպման բաժնի պետ Արման Ասլանյանը:

Վազելիս երիտասարդը նետել է սառը զենքի նմանվող առարկա:Փախուստը, սակայն, երկար չի տեւել. բարդ տեղանքում իրավիճակը կտրուկ փոխվել է: Փորձելով անցնել կիրճում գտնվող ջրատարը՝նա ընկել է ջուրը: Դուրս գալու անհաջող փորձից հետո երիտասարդն օգնություն է խնդրել ոստիկաններից, եւ Գվարդիայի ծառայողները նրան դուրս են բերել ջրից: Պարզվել է, որ 20-ամյա երիտասարդը թմրամիջոցով փաթեթներ է տեղադրել:

Ոստիկանության գվարդիայի 1-ին գնդի հատուկ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար ԱլիկՍարգսյանի խոսքով՝բացատրական աշխատանքի արդյունքում քաղաքացին իր բջջային հեռախոսի մեջ ցուցադրել է նկարները, որոնք վերաբերում են թմրանյութերին: «Ցուցադրված նկարներով տեղանքին լավ ծանոթ լինելով արագ կողմնորոշվել ենք եւ հայտնաբերել ենք փաթեթները»,- նշել է նա:

Կպչուն ժապավենով երեք փաթեթն էլ հայտնաբերվել է: Թմրամիջոց իրացնելու կասկածանքով երեւանցի երիտասարդը ձերբակալվել, տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել նախաքննական մարմին: Հանգամանքները պարզվում են:

● *Ապրիլի 1-ից 2-ը հանրապետությունում բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 1 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԷՑ-Ի ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 3-ին հիմք ընդունելով Յուրա Բազինյանի դիմումը՝ որոշել է Յուրա Բազինյանին ազատել մարզպետի օգնականի պաշտոնից: Յուրա Բազինյանը Նիկոլ Փաշինյանի ու Հայկ Ղալումյանի ընկերն է: Նա ծնվելէ Սեւքար գյուղում, Սեւքար գյուղից սերում են նաեւ մարզպետ Հայկ Ղալումյանը եւ նրա եղբայրը՝ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանը: Յուրա Բազինյանը 2008-2015 թվականներին «ՀայէԿոնոմբանկ» ԲԲԸ Իջեւանի մասնաճյուղում աշխատել է որպես ոսկերիչ-փորձագետ, 2010-2019 թվականներին այդ մասնաճյուղի կառավարիչը Հայկ Ղալումյանն էր: Օրերս Յուրա Բազինյանը նշանակվել է Հայաստանի էլեկտրական ցանցերի «Աղստեւ» մասնաճյուղի տնօրենի խորհրդական: ՀԷՑ-ը Սամվել Կարապետյանից խլելուց հետո դարձել է ՔՊ-ական, իշխանական գործազուրկ կադրերին բարձր աշխատավարձով աշխատանքի տեղավորելու հիմնարկություն: Հավելեմ, ուր Յուրա Բազինյանը 2022 թվականից Տավուշի մարզի թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահն է: Այդ հանձնաժողովի աշխատավայրը Իջեւան քաղաքում է: Տավուշի մարզի մյուս՝ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նստավայրը Նոյեմբերյան քաղաքում է: Այդ հանձնաժողովի նախագահը նախկինում ոստիկանության սպա, Սամվել Կարապետյանից ՀԸՑ-ը խլելուց հետո էլեկտրական ցանցերի «Աղստեւ» մասնաճյուղի Նոյեմբերյանի էլցանցի ղեկավար նշանակված Արկադի Հարությունյանն է:

ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆ

Իջեւան համայնքի Լուսահովիտ գյուղի հիմնական, Աճարկուտ գյուղի հիմնական, Դիլիջան համայնքի Խաչարձան գյուղի միջնակարգ, Նոյեմբերյան համայնքի Ջուջեւան եւ Բարեկամավան գյուղերի միջնակարգ դպրոցների աշակերտները, ուսուցիչները, նշված հանրակրթական դպրոցների աշակերտների ծնողները, այդ գյուղերի բնակիչները մտահոգված են, որ այս տարվա սեպտեմբերին մեկնարկելիք նոր ուսումնական տարում իրենց դպրոցները փակվելու են: 2025թ. դեկտեմբերի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «2026 թվականին Հայաստանում փակվելիք 234 հանրակրթական դպրոցներից քանի՞սն է Տավուշի մարզում, ո՞ր դպրոցներն են դրանք, ինչպե՞ս է լուծվելու այդ դպրոցների աշակերտների այլ բնակավայրերի դպրոցներ ամենօրյա տեղափոխության հարցը»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Դպրոցների փակվելու վերաբերյալ որոշում առկա չէ»: Իհարկե, ուսումնական տարվա կեսին ինչո՞ւ պետք է դպրոցների փակման որոշում ընդունվեր: Սակայն Տավուշի մարզպետը չի հերքել, որ դպրոցներ են փակվելու: Հավանաբար ծրագիր կա, որ այդ դպրոցները կփակվեն այս ուսումնական տարվա ավարտից, հունիսի 7-ին կայանալիք ԱԺ ընտրություններից հետո:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿՐՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հայտարարել է, որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունների հետեւանքները Իրանի դեմ զգացվում են ողջ աշխարհում՝ կոչ անելով միջազգային հանրությանը ցուցաբերել պատասխանատու եւ վճռական դիրքորոշում:



Նա այս մասին ասել է Ալեքսանդր Ստուբբի հետ հեռախոսազրույցի ընթացքում՝ անդրադառնալով տարածաշրջանային վերջին զարգացումներին եւ ընդգծելով դիվանագիտական ջանքերի ակտիվացման անհրաժեշտությունը՝ լարվածությունը մեղմելու համար:

Փեզեշքիանը նշել է, որ Իրանը մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում երկրորդ անգամ ենթարկվել է հարձակման՝ այն դեպքում, երբ գտնվում էր դիվանագիտական գործընթացում: Նրա խոսքով՝ հարվածները պատճառել են մարդկային եւ նյութական զգալի կորուստներ:

Իրանի նախագահը շեշտել է, որ նման «անօրինական պատերազմների» հետեւանքները սահմանափակված չեն միայն տարածաշրջանով, այլ ազդում են ողջ միջազգային հանրության վրա՝ խաթարելով միջազգային իրավունքը:

Նա նաեւ քննադատել է Եվրոպական միության արձագանքը՝ նշելով, որ որոշ երկրներ հանդես են եկել պատասխանատու դիրքորոշմամբ, մինչդեռ մյուսները՝ պասիվ կամ կողմնակալ են, հատկապես քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման հարցում:

Վերահաստատելով Իրանի ինքնապաշտպանության իրավունքը՝ Փեզեշքիանը նշել է, որ Թեհրանը չի ձգտում ընդլայնել հակամարտությունը, սակայն վճռականորեն պաշտպանելու է իր ազգային անվտանգությունը, ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը:

Նա նաեւ անդրադարձել է Հորմուզի նեղուցին՝ հայտարարելով, որ այնտեղ առկա անկայունությունը պայմանավորված է ԱՄՆ-ի եւ Իսրայելի գործողություններով, եւ ընդգծել, որ հակամարտությանը ներգրավված կողմերի հետ կապված նավերը չպետք է օգտագործեն այդ ուղին Իրանի դեմ գործողությունների համար:

Իր հերթին, Ալեքսանդր Ստուբբը մտահոգություն է հայտնել ստեղծված իրավիճակի կապակցությամբ՝ կարեւորելով դիվանագիտության դերը լարվածության նվազեցման հարցում եւ նշելով, որ Ֆինլանդիան պատրաստ է աջակցել խաղաղության եւ կայունության վերականգնման ջանքերին:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը լայնածավալ ռազմական գործողություններ են սկսել Իրանի դեմ՝ փետրվարի 28-ին Իրանի հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի սպանությունից հետո: Հարվածները իրականացվել են ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական օբյեկտների վրա՝ առաջացնելով զգալի մարդկային կորուստներ եւ ենթակառուցվածքների վնասներ:

Ի պատասխան՝ Իրանի զինված ուժերը հարվածներ են հասցրել ԱՄՆ-ի եւ Իսրայելի դիրքերին՝ կիրառելով հրթիռներ եւ անօդաչու թռչող սարքեր:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԹՐԱՄՓԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՎԵՐԱՆԱՅԵԼ

NATO-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն հաջորդ շաբաթ կայցելի Սպիտակ տուն՝ այն ֆոնին, երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կտրուկ քննադատում է եվրոպական դաշնակիցներին Իրանի դեմ պատերազմին չմասնակցելու համար:

Թե՛ ՆԱՏՕ-ն, թե՛ Սպիտակ տունը հայտարարել են, որ այցը նախապես էր պլանավորված: Սակայն այն տեղի է ունենում դաշինքի ներսում աճող տարաձայնությունների պայմաններում:

Թրամփը հայտարարել է, որ պատերազմից հետո կարող է վերանայել ԱՄՆ անդամակցությունը ՆԱՏՕ-ին՝ դաշինքը անվանելով «թղթե վագր»: Նրա հիմնական դժգոհություններից է այն, որ եվրոպական երկրները հրաժարվում են ապահովել Հորմուզի նեղուցի անվտանգությունը եւ չեն տրամադրում իրենց օդային տարածքն ու ռազմաբազաները ԱՄՆ գործողությունների համար:

ՆԱՏՕ-ում իրավիճակը որոշ վերլուծաբանների կողմից գնահատվում է որպես վերջին տասնամյակների ամենալուրջ ճգնաժամերից մեկը: ԱՄՆ նախկին դեսպան Իվո Դալդեր-ի խոսքով՝ եվրոպական երկրներում աճում է համոզմունքը, որ պետք է նվազեցնել կախվածությունը ԱՄՆ-ից:

Միեւնույն ժամանակ, եվրոպական առաջնորդները շարունակում են ընդգծել դաշինքի կարեւորությունը: Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը հայտարարել է, որ ՆԱՏՕ-ն «աշխարհի ամենաարդյունավետ ռազմական դաշինքն է» եւ Լոնդոնը հավատարիմ է մնում նրան՝ միաժամանակ ընդգծելով, որ Իրանի դեմ պատերազմը «իրենց պատերազմը չէ»:

Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը, իր հերթին, զգուշացրել է, որ ստեղծված իրավիճակը կարող է նպաստել Ռուսաստանի շահերին՝ հիշեցնելով նաեւ Ուկրաինայի շուրջ տարաձայնությունները:

Հիշեցնենք, որ Դոնալդ Թրամփը դեռ իր առաջին նախագահության ընթացքում ՆԱՏՕ-ն անվանել էր «հնացած»՝ առաջ մղելով «America First» քաղաքականությունը: Նրա նոր հայտարարությունները եւ քայլերը կրկին խորացնում են տարաձայնությունները դաշինքի ներսում:

Փորձագետների գնահատմամբ՝ ՆԱՏՕ-ում առաջացած ճեղքը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ Արեւմուտքի անվտանգության համակարգի վրա:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Անցած 1 օրում գրանցվել է 13 ավտովթար. 2 մարդ զոհվել է, 15-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում հանդիպել է ուսանողների հետ եւ հանդես եկել բանախոսությամբ՝ «Զարգացման հեռանկարներ, խաղաղություն, ապաշրջափակում եւ «TRIPP» նախագիծ» խորագրով:

Ինչպես Armenpress-ին տեղեկացրին ՀՀ նախագահի գրասենյակից, բանախոսության ընթացքում Հանրապետության նախագահը անդրադարձել է Հայաստանի զարգացման ռազմավարական առաջնահերթություններին, տարածաշրջանում խաղաղության հաստատման կարեւորությանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակման անհրաժեշտությանը,ինչպես նաեւ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը: Նա ներկայացրել է նաեւ «TRIPP» նախագծի նպատակներն ու հնարավորությունները՝ ընդգծելով դրա նշանակությունը տարածաշրջանային կապերի խորացման եւ տնտեսական զարգացման խթանման գործում:

Նախագահը կարեւորել է նաեւ Ջեյ Դի Վենսի Հայաստան կատարած այցը՝ այն գնահատելով որպես երկկողմ հարաբերությունների ամրապնդման եւ տարածաշրջանային կայունության ապահովման կարեւոր քայլ, որը նպաստում է ձեռք բերված պայմանավորվածությունների կյանքի կոչմանը: Նա ընդգծել է, որ կայուն եւ երկարաժամկետ զարգացումը հնարավոր է միայն խաղաղ, անվտանգ եւ կանխատեսելի միջավայրում:

Հանդիպման ավարտին տեղի է ունեցել հարցուպատասխան, որի ընթացքում ուսանողները հնարավորություն են ունեցել իրենց հետաքրքրող հարցերը ուղղել նախագահին: Այնուհետեւ նախագահը շրջել է համալսարանի տարածքում, զրուցել ուսանողների հետ եւ ծանոթացել իրականացվող աշխատանքներին:

ԻՐԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է

Հարավային Աֆրիկայում Իրանի դեսպանատունը արձագանքել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝Իսլամական Հանրապետության «քարե դար վերադարձնելու» մասին մեկնաբանություններին: Դեսպանատունը հայտարարություն է արել X սոցիալական մեդիա հարթակում: «Մինչ դուք դեռ քարանձավներում կրակ էիք փնտրում, մենք մարդու իրավունքներ էինք փորագրում Կյուրոսի գլանի վրա», - ասվում է հայտարարության մեջ: Դեսպանատունը նաեւ նշել է, որ Իրանը վերապրել է Ալեքսանդր Մակեդոնացու եւ մոնղոլական ներխուժումները, քանի որ Իրանը «ոչ միայն երկիր է, այլեւ քաղաքակրթություն»:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ Գ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ՝ FAMILY ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀԵԼԻ ՈՒՂԵԿԻՑ

Նոր Հաճնում գործող Family ընկերության պատմությունը սկսվում է 2003-ին՝ արեւածաղկի սերմերի արտադրությունից: Այնուհետեւ ընկերությունն ընդլայնել է իր գործունեությունը՝ շուկային ներկայացնելով նաեւ չիպսերի լայն տեսականի, պոպկորն եւ սուրճ, որոնք ներկայում իրացվում են Հայաստանի ներքին շուկայում:

Ընկերության տնօրեն Արման Մխիթարյանի խոսքով՝ արտադրության հիմքում դրված է ոչ միայն բարձրորակ հումքի օգտագործումը, այլեւ աշխատանքի նկատմամբ առանձնահատուկ մոտեցումը: Նրա ձեւակերպմամբ, Family-ի արտադրանքի գլխավոր առանձնահատկությունը թիմի նվիրվածությունն ու այն սերն է, որը ներդրվում է յուրաքանչյուր ապրանքի ստեղծման ընթացքում:

Ընկերության զարգացման եւ արտադրության ընդլայնման կարեւոր փուլը սկսվել է Կոնվերս Բանկի հետ համագործակցությամբ: Բանկի ֆինանսական աջակցությամբ կառուցվել է արտադրության նոր շենքը, որտեղ այժմ իրականացվում է ընկերության ամբողջ արտադրական գործընթացը:

Նոր արտադրամասի գործարկումը հնարավորություն է տվել զգալիորեն մեծացնել արտադրության ծավալները եւ նախանշել զարգացման նոր ուղղություններ: Մասնավորապես, ընկերությունը նախատեսում է առաջիկայում շուկա ներկայացնել նաեւ փոքր փաթեթավորմամբ արտադրանք՝ ապահովելով ավելի լայն հասանելիություն սպառողների համար, այդ թվում՝ խոշոր սուպերմարկետներում:

Այսօր Family-ն փոքր ընտանեկան բիզնեսից վերածվել է զարգացող արտադրության, իսկ Կոնվերս Բանկի աջակցությունը դարձել է այդ աճի առանցքային գործոններից մեկը՝ նպաստելով բիզնեսի կայուն զարգացմանն ու ընդլայնմանը: Ֆինանսավորումն իրականացվել է Կոնվերս Բանկի Women in Business վարկատեսակի շրջանակում, որը ստեղծված է աջակցելու կանանց կողմից հիմնված կամ ղեկավարվող ձեռնարկություններին՝ առաջարկելով հասանելի ֆինանսավորում, ճկուն պայմաններ եւ զարգացման համար անհրաժեշտ գործիքներ՝նոր շուկաներ մուտք գործելու եւ բիզնեսը վստահորեն ընդլայնելու նպատակով:

conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԲԱՆԿԵՐ Գ

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է

Յունիբանկը միացել է Ածխածնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցությանը (Partnership for Carbon Accounting Financials, PCAF)՝ շրջակա միջավայրի վրա իր ֆինանսական գործունեության ազդեցությունը գնահատելու եւ այն ավելի թափանցիկ դարձնելու համար:

PCAF-ը ֆինանսական հաստատությունների համաշխարհային համագործակցություն է, որի նպատակն է ներդնել միանման մոտեցումներ վարկերի եւ ներդրումների արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումները բացահայտելու համար: Միավորելով ավելի քան 700 ֆինանսական հաստատություններ՝ PCAF-ը շարունակում է ակտիվորեն ընդլայնվել Հյուսիսային Ամերիկայում, Լատինական Ամերիկայում, Եվրոպայում, Աֆրիկայում եւ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

Միանալով համագործակցությանը՝ Յունիբանկը մտադիր է կիրառել միջազգային մակարդակով ճանաչված մեթոդաբանություն իր ֆինանսական գործունեության հետ կապված արտանետումների չափման եւ բացահայտման համար:

«Սա կարեւոր քայլ է կլիմայական չեզոք հաստատություն դառնալու մեր մոտեցման ամրապնդման գործում: Այն մեզ հնարավորություն կտա էլ ավելի արդյունավետ կառավարել մեր պորտֆելի կլիմայական ազդեցությունը, բարձրացնել թափանցիկությունը շահագրգիռ կողմերի համար եւ աջակցել մեր հաճախորդներին՝ցածր ածխածնային տնտեսության անցնելու գործում»,-նշեց Յունիբանկի Վարչության նախագահի տեղակալ Վաղինակ Ստեփանյանը:

Այս նախաձեռնությունն արտացոլում է Յունիբանկի հավատարմությունը կայուն զարգացմանը, բարելավում է ռիսկերի կառավարման պրակտիկան եւ նպաստում կանաչ տնտեսության անցմանը:

ՎՏԲ–ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՐՔԵՑՐԵԼ Է

ՎՏԲ-Հայաստան Բանկը մեկնարկել է ավտովարկավորման պարզեցված գործընթաց՝ շուկայի ավելի քան 50 ավտոսրահներից նոր ավտոմեքենաների ձեռքբերման համար: Առաջարկի շրջանակում ֆիզիկական անձ հաճախորդները կարող են ստանալ վարկ՝ հաստատելով միայն եկամտի առկայության փաստն՝ առանց վճարունակության վերլուծության:

Վարկային առաջարկի հիմնական առավելությունն այն է, որ Բանկը հաշվի է առնում բացառապես հաճախորդի եկամտի առկայության փաստը՝ առանց վճարունակության հաշվարկի, եթե վարկի գումարը կազմում է մինչեւ 10 մլն ՀՀ դրամը ներառյալ՝ նվազագույնը 10% կանխավճարի դեպքում, եւ 10 մլն-ից մինչեւ 20 մլն ՀՀ դրամը ներառյալ՝նվազագույնը 25% կանխավճարի դեպքում:



«Նոր ավտոմեքենաների շուկան ակտիվորեն աճում է, եւ մենք ձգտում ենք աջակցել այս միտմանը: Գործընկեր ավտոդիլերների հետ միասին մենք պարզեցրել ենք գնման գործընթացը՝ դարձնելով այն առավելագույնս հարմարավետ: Նոր առաջարկը հնարավորություն է տալիս հաճախորդներին ստանալ վարկ շահավետ պայմաններով՝ հաստատելով միայն եկամտի առկայությունը»,- նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Վարկը տրամադրվում է տարեկան 13%-ից մինչեւ 14% տոկոսադրույքով (փաստացի տոկոսադրույք՝17%-18-8%)՝1-ից մինչեւ 7 տարի ժամկետով: Առաջարկից կարող են օգտվել ֆիզիկական անձինք, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ եւ ունեն մշտական գրանցում կամ փաստացի բնակության վայր Հայաստանի տարածքում:

Առավել մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում, Բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով կոնտակտային կենտրոն՝ 87-87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԴԵԲՅՈՒՏԱՅԻՆ

ԿԱՎԱՐՏՎԻ 3-ՐԴ ՍԵԶՈՆՈՎ

«Wizards Beyond Waverly Place» սերիալը դադարեցվում է իր վերջին մոգական թռիչքը կատարել:

Փետրվարի 2-ին «Wizards of Waverly Place»-ի վերածնունդը Instagram-ում հայտարարել է, որ սերիալը կավարտվի իր երրորդ սեզոնով, որը կհեռարձակվի ամռանը Disney+ եւ Disney Channel հարթակներում:

Վերջնական սեզոնը բաղկացած կլինի չորս էպիզոդից, եւ Սելենա Գոմեզը, ով մարմնավորում է Ալեքս Ռուսոյին ինչպես սկզբնական, այնպես էլ վերածննդի սերիալում, կկատարի իր ռեժիսորական դեբյուտը սեզոնի առաջին էպիզոդում:

Disney-ի մոգական սերիալի Instagram գրառման տեսանյութը ցույց է տալիս երկրորդ սեզոնի եզրափակիչի տեսարանը, որտեղ Ալեքսը մոգական դարպասով ընկնում է մութ մոգության աշխարհ՝ իր կյանքը զոհաբերելով չարիք Լորդ Մորսուսին հաղթահարելու համար:

Չնայած երկրորդ սեզոնի եզրափակիչը թողեց տպավորություն, որ Ալեքսը մահացել է, «Wizards Beyond» վերածննդի գլխավոր դերակատար Դեւիդ Հենրին՝ ով մարմնավորում է Ջասթին Ռուսոյին եւ հանդիսանում է Սելենա Գոմեզի հետ կատարողական պրոդյուսեր, շտապեց հանգստացնել երկրպագուներին:

«Գիտեք, Ալեքս Ռուսոն ավելի ուժեղ է, քան կարծում եք, եւ դեռ շատ բան կա սպասելու», - գրել է նա X սոցիալական ցանցում հոկտեմբերի 8-ին: «Դուք ճիշտ հարցերն եք տալիս: Մնացեք հետեւում, #WizardsBeyond-ը մեզ մոտ ունի մի քանի մոգական անակնկալ»:

Երրորդ սեզոնն, ըստ պաշտոնական սերիալի լոգլայնի, հետեւում է Բիլիին (Janice LeAnn Brown), ով «այսօր էլ դժվարությամբ է հաղթահարում երկրորդ սեզոնի վերջում Ալեքսի կորուստը» եւ «հասկանում է, որ իր մորը փրկելու միակ միջոցը նրա երկար կորած հոր հետ միավորվելն է»:

«Երբ նրա ընտանիքը միավորվում է Ալեքսին գտնելու համար, Բիլին հասկանալի է դառնում, որ նրանց միավորված ուժը միակ միջոցն է Ռուսոններին չարի դեմ հաղթելու»:

«Wizards Beyond Waverly Place»-ում նույնպես խաղում են Ալքայ Թիելը որպես Ռոման Ռուսո, Մաքս Մատենկոն որպես Միլո Ռուսո, Թեյլոր Կորան որպես Վինթեր եւ Միմի Ջիանոպուլոսը որպես Ջիադա Ռուսո:

Երկրորդ սեզոնի եզրափակչից առաջ, 36-ամյա Հենրին PEOPLE-ին պատմել է իր իդեալական ավարտի մասին.

«Հուսով եմ, որ մենք կկարողանանք փոխանցել գեղեցիկ եղբայրական ու քույրական հաղորդագրություն՝ հաշվի առնելով նրանց կյանքի ընթացքը այսօր: Մենք երբ մեծանում ենք, ընտանիքները հաճախ իրենց ճանապարհներով են գնում, բայց կապը միշտ պետք է մնա»:

Դերասանը բացեց նաեւ իր փորձը պրոդյուսեր աշխատելիս՝ իր երկարամյա կոստար եւ ընկեր Սելենա Գոմեզի հետ. նա նշել է, որ դա բացահայտել է Գոմեզի նոր կողմը:

«Նախկինում մենք երբեք իսկապես բիզնես կամ պրոֆեսիոնալ թեմաներ չենք քննարկել: Ամեն ինչ միշտ ընկերական մակարդակի վրա էր: Հիմա շատ հետաքրքիր է, երբ կարող ենք խոսել ինչ-որ այն բանի մասին, ինչը երկուսիս էլ շատ է հետաքրքրում եւ փորձել այն անել հնարավորինս լավ»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹՎՈՒՄ Է

Աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական արծաթե մեդալակիր Վարազդատ Լալայանը հավակնում է 2025 թվականի լավագույն ծանրորդի կոչմանը: Նախորդ տարի նա Եվրոպայի ու Աշխարհի կրկնակի չեմպիոն է դարձել: Գարնանը ծանրորդը Քիշնեւում երկամարտի 450 կգ-ում հաղթել է Եվրոպայի առաջնությունում, իսկ աշնանը Ֆյորդեում 461-ով լավագույնը եղել Աշխարհում: Այս ապրիլին Լալայանը Բաթումիում հերթական անգամ պայքարելու է Եվրոպայի չեմպիոնի կոչման համար:

Ավելի վաղ կանանց ցանկում էր հայտնվել նախորդ տարվա Եվրոպայի արծաթե մեդալակիր, երիտասարդների ԵԱ-ի հաղթող ու ԱԱ-ի 3-րդ մրցանակակիր Ալեքսանդրա Գրիգորյանը:

ԵՎՍ ԵՐԿՈՒ ԹԻՄ

Հայաստանի ֆուտբոլի գավաթի կիսաեզրափակիչ փուլ է դուրս եկել եւս երկու թիմ: «Անդրանիկ»-ը 5:2 հաշվով հաղթանակ է տոնել «Սյունիք»-ի նկատմամբ եւ ապահովել մասնակցությունը հաջորդ փուլում: Թիմերի առաջին խաղում գոլեր չէին գրանցվել:

Օրվա մյուս խաղում մրցել են «Շիրակ»-ն ու «Արարատ-Արմենիա»-ն: Երեւանյան թիմը երկու անպատասխան գնդակ է ուղարկել մրցակցի դարպասը: «Արարատ-Արմենիա»-ն ընդհանուր հաղթել է 3:0 հաշվով ու դուրս եկել կիսաեզրափակիչ:

Ավելի վաղ այդ փուլում էին «Ուրարտու»-ն ու «Նոա»-ն:

ԼԻԱՀՈՒՅՍ Է

«Բարսելոնայի», Մադրիդի «Ռեալի» եւ Արգենտինայի ազգային հավաքականի նախկին հարձակվող Խավիեր Սավիոլան կիսվել է աշխարհի 2026 թվականի առաջնության վերաբերյալ իր սպասումներով: «Մենք հաղթանակի գլխավոր հավակնորդներից ենք: Մեր կազմում է խաղում աշխարհի լավագույն ֆուտբոլիստը՝ պատմության մեծագույններից մեկը: Հասնելով բարձունքին՝ անհրաժեշտ է մշտապես ապացուցել սեփական կարգն ու հարգանք վաստակել որպես աշխարհի գործող չեմպիոն: Լիահույս եմ, որ աշխարհի առաջնության եզրափակչում մենք կմրցենք Իսպանիայի հավաքականի հետ»,-արգենտինացու խոսքերն է մեջբերում Marca պարբերականը:

ՆԱՀԱՆՋԵԼ Է

Մարտին կայացած միջազգային հանդիպումներից հետո ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների թարմացված վարկանիշային աղյուսակը: Հայաստանի ազգային հավաքականը նախորդ անգամվա համեմատ նահանջել է մեկ հորիզոնականով եւ այժմ 106-րդն է: Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի հավաքականը առաջատարությունը զիջել է աշխարհի փոխչեմպիոն Ֆրանսիայի ընտրանուն: Լավագույն եռյակը եզրափակում է աշխարհի գործող չեմպիոն Արգենտինայի հավաքականը: Հիշեցնենք, որ մարտի 29-ին մեր ընտրանին Երեւանում ընկերական հանդիպում էր անցկացրել Բելառուսի հավաքականի հետ ու պարտվել 1-2 հաշվով:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԵՐԳ

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ներկա է եղել Հայաստանի պետական ջազ նվագախմբի հիմնադրման 88-ամյակին նվիրված համերգին:

Միջոցառումն անցկացվել է Ճարտարապետների միությունում. նվագախումբը ներկայացրել է հատուկ համերգային ծրագիր՝ նվիրված կոմպոզիտոր, թավջութակահար եւ լեգենդար կոլեկտիվի հիմնադիր Արտեմի Այվազյանի հիշատակին ու հայկական ջազի ակունքներին: Համերգի գլխավոր հյուրն էր ճանաչված թավջութակահար Արտյոմ Մանուկյանը:

Արտյոմ Մանուկյանի եւ Դավիթ Մելքոնյանի կատարմամբ հնչել են Այվազյանի՝ ժամանակակից ջազային մշակումներով տարբեր գործեր, այդ թվում՝ «Ալագյոզ Աչերդ», «Բարկարոլա», «Հայկական ռապսոդիա», ինչպես նաեւ նվագախմբի էքսկլյուզիվ երկացանկից ընտրված ստեղծագործություններ. գեղարվեստական ղեկավար՝ Դավիթ Մելքոնյան:

Հայաստանի պետական ջազ նվագախումբը ՀՀ ամենահեղինակավոր երաժշտախմբերից մեկն է, որը պահպանում եւ տարածում է ջազային արվեստը՝ ներկայացնելով նաեւ բազմաթիվ նոր կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի պատմության թանգարանում ներկա է գտնվել միջնադարյան հայկական փայտարվեստի եզակի ցուցանմուշներից մեկի՝ 1188 թվականին թվագրվող հայկական եկեղեցու փայտյա դռան փեղկի ցուցադրության բացմանը: Պատմական արժեք ներկայացնող այս բացառիկ նմուշը ձեռք է բերվել Լոնդոնի «Սեմ Ֆոգ» ցուցասրահից՝ Կառավարության որոշմամբ, ԿԳՄՍ նախարարության մշակութային արժեքների ձեռքբերման եւ Հայաստան տեղափոխման պետական ծրագրի շրջանակում: Լոնդոնի միջազգային աճուրդում վաճառվող հայկական բացառիկ մշակութային արժեքի ձեռքբերման եւ Հայաստան տեղափոխման համար Մշակույթի զարգացման հիմնադրամին պետբյուջեի պահուստային ֆոնդից հատկացվել է 175 միլիոն 360 հազար դրամ:

Բացառիկ արժեք ներկայացնող միջնադարյան քրիստոնեական արվեստի այս կոթողը փորագրված է արեւելյան ընկուզենու փայտից եւ վերագրվում է Բագրատունյաց շրջանի՝ 1188 թվականի փայտագրության ավանդույթին:Ցուցանմուշի պատկերագրությունը միավորում է աստվածաշնչյան եւ արքունական թեմաները: Կոմպոզիցիայի կենտրոնում պատկերված է Դանիելը՝ առյուծների մեջ, իսկ ստորին հատվածներում ներկայացված են տարբեր գազանամարտերի տեսարաններ, որոնք համեմատելի են Դանիելի տեսիլքի խորհրդաբանության հետ (Դան. 7:1-7, 7:23-27): Հորինվածքի կենտրոնական մասը ընդգծում է խաչի «թեւավոր» տիպը՝ ծաղկային ծիլերով եւ պտղաբեր խորհրդով, որը համապատասխանում է հայկական եկեղեցական արվեստում կյանքի ծառի գաղափարին: Արվեստագիտական եւ փորձագիտական համայնքը հաստատում է ցուցանմուշի բացառիկ արժեքն ու նշանակությունը հայկական միջնադարյան մշակույթի ուսումնասիրության համար:-Ցուցադրությունն ապրիլի 3-ից հասանելի կլինի այցելուներին Հայաստանի պատմության թանգարանում:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում ապրիլի 5-ին՝ ժամը 16:00-ին, կկայանա «Ոսկե ճուտիկը» բեմադրությունը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ գնել ավտոմեքենա, սակայն չգիտեմ, թե ինչից պետք է սկսել:

Էմմա Բեջանյան, 32 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր կարող եք կնքել երկու տարբերակով՝նոտարական կարգով կամ առանց նոտարական վավերացման՝ անմիջապես Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական բաժնում: Նոտարական կարգով առուվաճառքի պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ է, որ այն կնքելու ժամանակ ներկա լինեն ավտոմեքենայի սեփականատերը եւ այն գնել ցանկացող անձը՝ գնորդը: Երկուսի դեպքում էլ կարող են պայմանագիրը ստորագրել նրանց ներկայացուցիչները, որոնք պետք է ներկայացնեն համապատասխան լիազորություններ պարունակող լիազորագիր՝ կրկին նոտարական կարգով վավերացված: Նոտարին պետք է ներկայացնել տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի վկայականը, տեխնիկական անձնագիրը, վաճառողի եւ գնորդի անձնագրերը, տեղեկանք ՃՈ հաշվառման-քննական բաժնի կողմից այն մասին, որ ավտոմեքենան կալանքի տակ չէ, գրավադրված չէ եւ ծանրաբեռնված չէ այլ անձանց իրավունքներով: Տեղեկանքը կարող եք վերցնել ՃՈ հաշվառման-քննական բաժիններից, որտեղ Ձեզ կտրամադրեն դիմումի ձեւը, որը պետք է լրացնեք, պետք է վճարեք պետական տուրքը, որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կտրամադրվի համապատասխան տեղեկանքը: Նոտարական կարգով պայմանագիր կնքելուց հետո Դուք, որպես գնորդ, կարող եք ավտոմեքենան տանել ՃՈ հաշվառման-քննական բաժին, որտեղ պետք է ավտոմեքենան անցնի ստուգման կետը (ստուգում են ավտոմեքենայի նույնացման համարը), որից հետո կտրամադրեն ստուգման թերթիկ (այն ուժի մեջ կլինի 24 ժամ): Այնուհետեւ պետք է.

- Ներկայացնեք ավտոմեքենայի պետհամարանիշները,
- վճարեք գույքահարկը եւ ներկայացնեք գույքահարկի զրոյական տեղեկանքը,
- ավտոմեքենայի հաշվառման համար նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիրը, իսկ եթե ցանկանում եք հատուկ պետհամարանիշ գնել, ապա նաեւ համապատասխան լրացուցիչ վճար կատարելը հավաստող անդորրագիրը,
- Ձեր անձնագիրը:

Սրանից հետո արդեն կարող եք կատարել ավտոմեքենայի նկատմամբ Ձեր իրավունքների պետական հաշվառում: Պետական հաշվառում կատարելուց եւ նոր պետհամարանիշներ ստանալուց հետո պետք է ապահովագրեք տրանսպորտային միջոցը՝նոր պետհամարանիշներով, քանի որ առանց ԱՊՊԱ պայմանագրի Ձեզ նոր տեխնիկական անձնագիր չեն տրամադրի: Գործարքը նոտարական կարգով վավերացնելու դեպքում Վաճառողը կարող է հետագայում չգալ ՃՈ հաշվառման-քննական բաժին, եւ այդ ձեւակերպումները կարող եք կատարել առանց նրա ներկայության՝նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրով:

Ճանապարհային ոստիկանություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Կինս կարո՞ղ է առանց իմ համաձայնության մեր երեխային տանել երկրից:

Սուրեն Աղբալյան, 41 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Անձի ազատ տեղաշարժման իրավունքը ՀՀ տարածքով կամ դրանից դուրս՝որպես կարեւորագույն իրավունք, սահմանված է ՀՀ Սահմանադրության մեջ, եւ այդ իրավունքը կարող է սահմանափակել միայն բացառիկ դեպքերում, այն էլ՝դատարանի որոշման հիման վրա: Ներկայում գործնականում կան մի շարք երկրներ (օրինակ՝Վրաստան, ՌԴ եւ այլն), որոնք սահմանը հատելուց չեն պահանջում մյուս ծնողի գրավոր համաձայնությունը եւ բավարարվում են միայն նրանով, որ անչափահաս երեխային ուղեկցում է նրա ծնողը: Իսկ մի շարք այլ երկրներում, որտեղ տրամադրվում են վիզաներ, պահանջվում է պարտադիր ներկայացնել երեխայի մյուս ծնողի գրավոր համաձայնությունը, այն էլ՝ նոտարական կարգով վավերացված տարբերակով, եւ եթե ծնողը դա չի ներկայացնում, ապա այդ պետությունները արգելում են երեխայի մուտքն իրենց երկրի տարածք: Երեխայի ապօրինի ելքը երկրից կանխելու նպատակով անհրաժեշտ է դիմել դատարան՝ ներկայացնելով երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջ: Այս պահանջը ներկայացնելուն զուգահեռ՝անհրաժեշտ է, որ դատարանին հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն ներկայացնեք՝խնդրելով մինչեւ գործի ավարտն արգելել պետական իրավասու մարմիններին թույլատրել երեխայի ելքը ՀՀ-ից: Այս միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում դատական ակտի պահանջը կկատարվի ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, որը համապատասխան գրություններ կուղարկի սահմանապահ մարմիններին՝պահանջելով արգելել երեխայի ելքը ՀՀ-ից: ՀՀ-ից երեխայի ելքն արգելելու միջնորդությունը կարող եք հիմնավորել նրանով, որ եթե ապագայում դատարանը բավարարի տեսակցության կարգ սահմանելու մասին պահանջը, ապա Դուք իրավունք կունենաք երեխային տեսակցել ըստ սահմանված տեսակցության կարգի, եւ եթե երեխային արդեն իսկ դուրս տարած լինեն երկրից, ապա դատական ակտի կատարումը կդառնա անհնարին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խորհուրդ է տրվում դիմել իրավաբանական օգնության, քանի որ կախված միջնորդության հիմնավորվածությունից՝դատարանն է որոշելու՝բավարարե՞լ այն, թե՞ մերժել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Կոտայքի մարզում. ճակատ ճակատի բախվել են «Mercedes»-ները, կա 1 զոհ, 5 վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 4 + 6 + 10
	Կոտայքի լեռներ	0 + 3 + 6 + 9
	Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 +10 + 12
	Գեղարքունիք	0 + 3 + 5 + 9
	Լոռի	+ 4 + 7 + 10 + 13
	Տավուշ	+ 3 + 6 + 10 +13
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 5 + 8
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 +10 + 13

	Արարատ	+ 5 + 8 +12 + 15
	Արմավիր	+ 7 + 10 +13 + 16
	Վայոց ձորի լեռներ	0 + 3 + 5 + 8
	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 9 +12 + 16
	Սյունիքի լեռներ	0 + 3 + 3 + 6
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +10 + 13
	Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +16 + 19
	Երեւան	+ 7 + 9 +12 +14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **03.04.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*